

ԴԻՒԱՆ ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԱՅ

Ե

Կ. Պոլսոյ պատրիարք Սուրբի Թեհրաւայցի
առ Եղիազար կարողիկոս յերևանիկիմ^(*):

Շնորհազարդ և պատուական հայրապետի և հոգևոր Հօրդ իմոյ Տեառն Տէր Եղիազար հայրապետի և սրբազան կաթուղիկոսի ամենայն հայոց Տանն կիլիկոյ, նըւաստ որդեհէ քումմէ Սարգիս վարդապետէ և պատրիարքէ կոստանդնուպոլիսին հասցէ սէր սրտի անկեղծ և աննախանձար և ողջոյն լի փարմամբ և համբոյր առառուածաշօչափ ձեռացդ, նաև որք ընդ քեզ են և կան ի սպասու քումմ մեծութեանն, ամենայնի մեծաւ ողջունիւ և յամերամ ժամանակօք կալ մեալ յաւետ ինդութեամբ:

Եւ ընդ սմին հարցումն լիցի վեհիդ մերոյ թէ ո'րպէս կամ թէ զի՞նչ վշտի, նեղութեան և աշխատանաց կեսոս ի բերմանց ժամանակիս, զոր յուսամք ի բարերարէն և ի խաղաղաբար Սրբոյ Հազուոյն զի բարութեամբ և խաղաղութեամբ լցուցէ զքեզ ընդ ազգիս Հայոց, մանաւանդ ընդ համանիսն քո, և բարձցէ զխոռվաթիւնն և զնակառակութիւնն ի միջոյ երկուց սուրբ աթոռոցն. և Քրիստոս Աստուածն ամենայնի զիս ընդ վեհի իմ՝ իրը հայր ընդ որդւոյ անքակտելի սիրով միացուցէ, զի կացեալ մնացուք լի սիրով ի յամօթ և ի նախատինս թշնամեացն մերոց:

Եւ դարձեալ զաօն գալստեանն քում ի վազուց ժամանակէ կու սպասէի, և ակընկալութիւնս իմ յամենայն ժամու զիտէի ակն իմ ի սեմս բնակութեանն իմոյ. բայց այժմ լիապէս լցեալ ևմ որախութեամբ հանդերձ հոգւով և մարմնով: Արդ գալդ քո բարեաւ լիցի և ճանապարհն քո օրհնեալ եղիցի: Դարձեալ ծանիցէ վեհիդ իմ, զի այսպան վերոյգբեալքս մի՛ այլայլութեամբ իմասցիս և մի՛ խեթիւ և մախոնօք կեղծաւորութեամբ, այլ չժմարտապէս իմասցիս, զի հոգի, սիրտ և լեզու

մի՛ է, որ զիտակ իսկ ես բնութեանս: Արդ՝ հրամայեալ եկեսջիր ի տեղս ի ժամապրեալ տունն, յորում զիտակ իսկ են եկեալ բարեկամքգ մեր, և կացցես ի տեղին, և ինձ ազդ արարեալ զի գայցեմ առ սոս Տեառն վեհիս, և տեսցես՝ թէ յեանեալ որգեկէզ զի՞նչ բարութեան հասանելոց լիցիմ, և կամ թէ ո'րպիսի բարութեամբ կու լցուցանելով բարեկամս իմն և քոյնն, զի ուրախացեալ բերկբեսցի սրտիւ, հոգւով և մարմնով: Դարձեալ զի՞նչ որ անկն է ինձ յատաջ տանելն, չարչարիմ հոգւով և մարմնովս և զի՞նչ որ քումմ մեծութեանն կու վայելէ՝ զայն զու զիտես և քո զայրէթն: Այնպէս հաւատա՛, հայր սուրբ, զի ես ի քեզ թէսմիմ եմ յանձամբս, և եթէ հրամանքգ ևս ըստ մտաց և ըստ խորհրդին իմոյ լիցիս, [ս^o] ոք կարէ յաղթահարել զմեզ ողորմութեամբն Աստուածոյ: Այլ սրտապնդեալ և զօտի ի վերայ զօտւոյ ածեալ եկեսջիր ի տեղս: Ողջունեալդ ի հոգւոյն Սրբոյ ողջ լե՛ր ի Տէր:

Գրեցաւ ի թվին հազար հարիւր ԺԴին
(= 1665) ի Յունիսի հինգն:

ԻԱ

Յակոբ կարողիկոս Զուղայեցի Ամասիային առ Եղիազար կրդ. Երևանիկ^(*):

Ցիսուսի Քրիստոսի ծառայ Յակոբ կաթողիկոս ամենայն հայոց, յորմէ հասցէ զիր սիրոյ, ողջունի և մեղաղբանաց առ հոգւոր որդւոյ իմոյ եղիազարու անուանեալ կաթուղիկոսի: Ծնդ որս և յուշ լիցի քեզ, զի զու որ արհամարէէիր զամենեսեան, երբեմն զմեզ և երբեմն զմերայինս և երբեմն ևս յաւետ զանուղղազնաց վարսայլ սեազլիսաց՝ ինքնահաւան, ինքնահաճ, արձակագլուխ շըջողաց եպերմամբ քամահէիր, սաստող և յանդիմանող լինէիր. և նարդեանս ո՛ւր զնաց այն իրաւոնքն: Արդ նի՛ստ քոյոյ սրտիդ դատաւոր զու քեզէն. եթէ քոյդ արարմունք վասն իմ

(*) Ընդօրինակութեան մէջ նամակիս վերնագիրն է «Յակոբ կաթողիկոսի զիրն է Ամասիոյ զրեալ առ վեհին ընդ Սարգիս վարդապետին»:

(*) Ընդօրինակութեան մէջ նամակիս վերնագիրն է «Սարգիս վարդապետի զիրն է»:

անկարգութեանս և անարժանութեանս էր, ո՞վ էր քեզ զիմակաց, թո՞ւ երեսի վարդապետք և եպիսկոպոսք առ քեզ հաւաքէիր, կամ երեսի քաղաքաց զօլվաթաւորաց թզթով ազգ առնէիր զիմ անարժանութիւնս, այնուհետեւ եթէ զու լինէիր լինելոց և կամ զայլո՞ւ առանց աղմիլի և խոսքութեանց լինէր: Իսկ թէ յազագս կիլիկոյ մասինն էր, որք յառաջ եկեալ ևն և այժմս ևն, ո՞վ էր լաւազյն քան զբեզ, որ մեք հակառակ և զժկամակ լինէաք յայլմ քեզ ևս: Թէ յազագս հոռոմ ազգին է, որպէս սիրելի որդին Սարգիս վարդապետն պատմեաց մեզ երդմամբ՝ թէ յազագս այնր է, արժան էր ազգ առնել մեզ: Բայց զու ոչ թէ երեսի քաղաքաց, և կամ երեսի ազգիս զօլվաթաւորացն, աննշան արանց և փոքր զասապղոցն ևս ևս զրեալ՝ թէ մի՛ ընդունիք զնոսս, օրհնութիւն և անէք նոյցա իրրե ասասպելս համարեսջիք, և կամ թէ ոք ընդդիմանայ հրամանի իմոյ, թագաւորական բուռն իշխանութեամբս, որ եօթն ամառ յառաջ հոգացեալ ևմ, թագաւորական կնքաւ չարաչար կոտանօք տանջնմ և զատնեմ զինչս չլսողաց իմոյ՝ ևս զըրեալ. և թէ քանի՛ կերպիւ արհամարհանք տո յիս ևս զըրեալ, որ ևմ արժանս: Դուտո՞ւր իրաւունս առաջի Աստուծոյ քոյոյ մատցդ. մեք և մերայինքս զի՞նչ կարծէաք առ այս, ոչ այլ ինչ՝ եթէ ոչ կործանութիւնսուրը Աթոռոյն մերոյ կուսարչին: Իսկ եթէ իրաւ և ճշմարիան այս էր, որ Սարգիս վարդապետն կարգաւ մի ըստ միջէ կարգաւ պատմեաց մեզ քո սրտիդ խորհուրդն, ոչ աւանիկ այսքան զրովզմանս և խոսքութեանս, և հազար վայ մեզ այսքան պարզամիտ ժողովրդեանս, զուր պատճառու քո մատ մի թուղթ չողարկելու եղեւ. զի՞նչ լիսաս լինէր մատ մի թզթով մեզ ծանուցանէիր՝ թէ մի՛ լիցի մեզ վրդովմունս յազագս իմոյ աստիճանի, զի ուխտայդրութիւնս առաջի Աստուծոյ հաստատ ունիմ. մատ մի չզրեցիր որ մեք այլ միամիտ լինէաք. հարիւրով և հազարով զրեցիր, որ ոյսքան վրդովմունս և զայթակդութիւնս ծնաւ, որ ոչ վայել էր զիտութեանդ. սոսկալի զատաստանին տայ պատասխանին պատճառ լինողն, ո՞վ ոք իցէ: Դարձեալ յազագս Սրդնցի Յոհան վարդապետին կող-

մանէ՝ մինչ ցայժմ ոչ զինքն եմ տեսեալ, ոչ քո առաքեալ թուղթն, որ ընդ Սարգիս վարդապետն ասացեալ ես. իմոյս թզթիս ո՞ւր է պատասխանին, զինչ որ սիւրելի Սարգիս վարդապետն յազագս մեր կողմանէ առ քեզ ասացեալ, նոյնպէս քո կողմանէ առ մեզ. որպէս քո մասակար հուրն է չիջուցեալ, նոյն կերպիւ մերս բարկութեանն չիջոյց: Իսկ որովհետեւ զու քո արարմանցդ ես վոչիման և ունիս ճշշմարիտ հնազանգութիւն առ սուրբ Աթոռն կուսարչին և անխարդախս սէր առ մեզ, նոյնպէս և մնք. միայն չարն ստանայ, որ հակառակութեան կու խնդայ, իսկ Քըրիստոսի աշակերտքն սիրոյ ևւ հաշտութեան պարտին խնդալ: Տէր առաջնորդ կեցէ. յերս զմիմեանս տեսանեմք, յայնժամ լինի կատարեալ խնդութիւն:

Դրեցաւ ի քաղաքս Ամասիայ:

Հրաւարակից՝ Մ. Ե. Ն.

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ

Ա.Մ.Ս.Օ.Բ.Ե.Ա.Յ Լ.ՈՒ.Բ.Յ

Անցնող Մարտ ամսուան ընթացքին, Ս. Աթոռոյոյ Տիօնելի ժողովը տասնեւերկու անդամներ ի նիստ գումարուեցաւ իրրեւ վարչական Մարմին իսկ իրրեւ Կրօնական Գեր. Անեսն մէկ անդամ. նոյնպէս Աւատմենական Խորհուրդը՝ մէկ անդամ, իւրաքանչիւրը զրագելով իր իրաւասութեան մէջ եղած խնդիրներով:

❶ Բ. 26 Փետր.— Երեկոյին կատարուեցաւ մեծանալէս նախատօնակ Տեառնընդառաջին թեամակրութեան, քաղաքացի և վանքանակ Հայեր Տէրընտասեան հրալուցութիւններ կատարեցին: Իսկ Ս. Թարգմանչաց վարժարանի կարմրազդեան մանկունք Ս. Յակոբայ բակը չար ի շար կը լիցնէին մամեղէն ի ձեռին, անցք տաւով Ս. Պատրիարք Հօր և Միաբանութեան:

❷ Հ. 27 Փետր.— Տեառնընդառաջի տօնին առթիւ հանդիսիւ պատարգեց Տ. Սմբատ Սըբարզան, և քարոզելով «Հոյս ի յայտնութիւն հետառոսաց և վառք ժաղավրդեան քում Խորյէլի» ընարանին վրայ, բացատրեց աւետարանի կրօնքին բարյական և քաղաքակերթական մեծ օգուտը՝ մարգելութեան համար ընդանիքապէս, և պատմական այն փառքը, զո՞ր անտարակոյս քրեաւ անկերա իր ազգակիցներուն, եթէ այս վերջինները սակայն կարհնային աննախազաւարը ոգուվ ըմբռնել զայն: